Հաստատում եմ՝
Երևանի Մխիթար Հերացու անվան
պետական բժշկական համալսարանի պրոռեկտոր
կ.գ.դ., պրոֆեսոր Կ. Բ. Եսայան

«04» հոկտեմբերի, 2024 թ.

ԿԱՐԾԻՔ

Առաջատար կազմակերպության Իրինա Հովհաննեսի Բաբաջանյանի «Հոգեբանի հետազոտական և գործնական դիագնոստիկայում տեսական մոտեցումների և սկզբունքների կիրառման յուրահատկությունները» թեմայով «Ընդհանուր հոգեբանություն, հոգեբանության տեսություն և պատմություն, անձի հոգեբանություն» ԺԹ.00.01 մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ

Ժամանակակից հոգեբանության տեսակետից հետազոտական և պրակտիկ գործունեության մեջ հոգեբանական գնահատման կամ դիագնոստիկ գործընթացում բազմաբնույթ մեթոդների կիրառման տեսական մոտեցումների և սկզբունքների համապատասխանության հիմնախնդիրը արդիական է ինչպես հոգեբանական կրթության կազմակերպման, այնպես էլ գիտական կամ գործնական գործունեության առաջադրված պահանջներին համապատասխան համակարգման տեսանկյունից:

Ատենախոսը հստակ և հիմնավոր ընտրել է տեսամեթոդական հիմքերը, որոնք համապատասխանաբար վերաբերվում են Թոմաս Թեոյի գիտելիքի տարբեր գործառույթների միջև հավասարակշռության ընդունման կամ մերժման հետևանքների և հոգեբանական պրակտիկայի վրա դրանց ազդեցությանը, Ա. Գոլդմանի փիլիսոփայական մոտեցումը իրավաբանության և հոգեբանության փոխհարաբերություններին, Վ. Ջեյմսի և Ի. Լոկատոսի կարևոր աշխատություններին, Դ. Ֆիշհամի նոր հետազոտական մեթոդի վերաբերյալ ժամանակակից մոտեցումներին և Դ. Թրուսկոտի հետազոտական մտորումները հոգեթերապիայի տեսությունների «ճշմարտություն» մասին: Ատենախոսոկան հետազոտության ամփոփման արդյունքում հիմնավորված են գիտական նորույթը, տեսական ու գործնական նշանակությունը, պաշտպանության առաջադրված դրույթները և եզրակացությունները:

Ատենախոսությունը կազմված է ներածությունից, հինգ գլուխներից, եզրակացություններից, հարուստ գրականության ցանկից, որոնք ունեն տրամաբանական հաջորդականություն և փոխկապվածություն: Աշխատանքը շարադրված է 212 համակարգչային էջի վրա: Օգտագործված գրականության ցանկը արդիական է և կազմված է 226 գրական աղբյուրներից, որոնցում լիովին արտացոլված են ուսումնասիրվող հիմնահարցերը:

Ի Բաբաջանյանի ատենախոսության առաջին տեսական գլխում վերլուծված են ծագումնաբանական սկզբունքների կիրառման առանձնահատկությունները հոգեբանի գիտական և պրակտիկ գործունեության մեջ, որում ներկայացված են ընտրված հիմնախնդրի հոգեբանական, և միջգիտակարգային հետազոտության տեսական հիմքերը: Հեղինակը քննարկել է հոգեբանության ծագումնաբանական սկզբունքների հիմնական դրույթները, անդրադարձել է մոտեցումներին և դրանց օգտակարությանը, ինչպես նաև հոգեբանության ոլորտում նախկինում ուսումնասիրված մոդելների հետ կապված որոշ հիմնային տեղեկությունների: Մանրամասն քննարկվել է մեկ այլ տարբերություն, որը գոյություն ունի հոգեբանության և ծագումնաբանության միջև, այն է, թե այս հասկացություններից որն է ավելի շատ կապված այն բանի հետ, թե ինչու են մարդիկ կրում իրենց համոզմունքները: Կան որոշ հայտնի հոգեբաններ, ովքեր իրենց ուսումնասիրություններն ու տեսությունները ներդրել են ծագումնաբանության միջոցով: Տեսական վերլուծության միջոցով առձանագրվեց, որ ինչպես «Theory of Mind»-ը, այնպես էլ ծագումնաբանական ըմբռնումը նպաստում են ֆիզիկական աշխարհում միևնույն իրավիճակի ֆենոմենալ և գիտական ներկայացումների կառուցմանը և արտացոլմանը (ըստ Կիրակկոպոլոի և վոսնիադոի):

Ատենախոսության երկրորդ գլուխը նվիրված է՝ «Ժամանակակից կիրառական հոգեբանության ձևավորման գիտական հիմքերի խնդիրը» թեմային: Հետազոտության այս բաժինը ներկայացնում է ժամանակակից կիրառական հոգեբանության ձևավորման խնդրի վերաբերյալ գիտական գրականության վերլուծություն, քանի որ պատմական ակնարկը թույլ է տալիս ավելի լիարժեք ներկայացնել հոգեբանության ենթաճյուղերում հոգեթերապիայի, հոգեբանական խորհրդատվության և միջամտությունների զարգացման ներկայիս միտումները: Կիրառական հոգեբանությունը նկարագրելիս նշվում է, որ դա հոգեբանական մեթոդների և գիտական հոգեբանության արդյունքների օգտագործումն է մարդու վարքի և փորձի գործնական խնդիրների լուծման համար, որը ներառում է տարբեր ենթակարգեր: Հոգեբանության մեթոդաբանությունը, տարբեր հայեցակարգային մոտեցումները և հոգեթերապիայի պատմությունը մանրակրկիտ նկարագրված են բազմաթիվ մենագրություններում, գիտական հոդվածներում և դասագրքերում, որոնց համառոտ մեկնաբանությունը առկա է այս բաժնում: Այս գլխի

ենթաբաժինները նվիրված են հոգեբանական ճանաչողության տեսական խնդիրների վերլուծությանը և պրակտիկայի ուսումնասիրությանը Ռուսաստանի և Հայաստանի համեմատության օրինակով:

«Հոգեբանի պրակտիկայում հոգեբանական գնահատման մեթոդների գիտական և կիրառական նշանակության վերլուծությունը» ներկայացված է 3-րդ գլխում: Իրականացվել է հոգեբանական գնահատման մեթոդների կիրառման ժամանակակից խնդիրների և պահանջների վերլուծություն, որոնք բացահայտվել են տարբեր երկրների գիտնականների կողմից: Կարևոր է այն հանգամանքը, որ հեղինակը մատնաշում է APA - ի պաշտոնական փաստաթղթերը, որոնցում հստակորեն ներկայացնում է հոգեբանական գնահատման և թեստավորման պահանջները և արդի մարտահրավերները:

4-րդ գլխում հստակ ներկայացված են հետազոտության ծրագիրը, փուլերը, մասնակիցների ընտրանքը և հարցման մեթոդները: Հետազոտության համար հիմնավորվել և ընտրվել է որակական և քանակական մեթոդների համալիր: Կիրառվել է փորձագիտական հարցման մեթոդը, որին մասնակցել են ԱՄՆ-ի և ՀՀ-ի փորձագետ հոգեբանները: Հետազոտության բոլոր փուլերում առկա է ներկայացուցչական ընտրանք՝ 377 մարդ:

5-րդ գլխում և ենթաբաժիններում համապատասխանաբար վերնագրված են հետազոտության արդյունքները, ամփոփված են հոգեշտկողական գործունեության մեջ կիրառական ախտորոշման գործընթացի մեթոդական հիմքերի առանձնահատկությունների էմպիրիկ ուսումնասիրության արդյունքները: Էմպիրիկ ուսումնասիրության սկզբում տեսականորեն վերլուծված է մեթոդական և հայեցակարգային առումով մոտեցումների և սկզբունքների իրականացման առանձնահատկությունները: Նաև ներկայացված է հոգեբանական աջակցության և ծառայությունների ներկայացման և խթանման բովանդակային վերլուծության արդյունքները: Այս փուլի նպատակն է իրականացնել ՀՀ-ում, ՌԴ-ում և ԱՄՆ-ում հոգեբանական ծառայության կենտրոնների առցանց գործունեության քանակական և որակական չափանիշներին համապատասխան համեմատական ուսումնասիրություն: Ամփոփելով հետազոտության արդյունքները նշվում է, որ այցելուների ընդունելության գործընթացում ախտորոշման գործընթացի մեթոդաբանական հիմքերի առանձնահատկությունների ուսումնասիրության վերաբերյալ հոգեբան փորձագետների հետ հարցման արդյունքների համեմատական վերլուծությունը ցույց տվել խորհրդատվական և թերապևտիկ գործունեության առանձնահատուկ տարբերություններ: Հեղինակի կողմից բացահայտված տարբերությունները հիմնականում կապված են կարգավորող պահանջների առկայության (հանդիպումների

արձանագրություն և գնահատման մեթոդներ) և անձի գնահատման չափանիշների հետ (ինտուիցիա, զրույց և հարցում, տեսական գիտելիքներ): Ամերիկացի հոգեբանների հետ համեմատած, հայ հոգեբանների պատասխանները վկայում են գնահատման մեթոդների ավելի ընդհանուր և սահմանափակ իմացության մասին:

Իրինա Բաբաջանյանի թեկնածուական ատենախոսության և սեղմագրի բովանդակությունը լիարժեք են և համապատասխանում են ԲՈԿ-ի ԺԹ.00.01 թվանիշին՝ «Ընդհանուր հոգեբանություն, հոգեբանության տեսություն և պատմություն, անձի հոգեբանություն»: Ծավալուն ու աշխատատար տեսական ու էմպիրիկական հետազոտության արդյունքներով ատենախոսը կարողացել է իրականացնել իր առջև դրված նպատակին և բոլոր խնդիրներին համապատասխան լուծումներ: «Հոգեբանի հետազոտական և գործնական դիագնոստիկայում տեսական մոտեցումների և սկզբունքների կիրառման յուրահատկությունները» թեմայով ատենախոսական աշխատանքը զուրկ չէ որոշ թերություններից, որոնք սակայն վերաբերվում են հետազոտության առանձին կողմերին և չեն նվազեցնում տվյալ աշխատանքի իրական բովանդակությունը և գիտական արժեքը:

Աշխատանքի մանրակրկիտ ուսումնասիրությունը բացահայտեց որոշ վրիպումներ և թերացումներ, այսպես՝

1. Ատենախոսության վերնագիրը երկիմաստ բնույթ է կրում՝ մի կողմից այպիսի տպավորություն է ստեղծվում, որ ածխատանքը նվիրված է բուն հոգեբանի դիագնոստիկային, մյուս կողմից՝ դիագնոստիկայի ընթացքում տեսական մոտեցումների յուրահատկություններին: Այս խնդիրը առկա է նաև աշխատանքի 5-րդ գլխի ենթաբաժիններում, որտեղ տպավորություն է ստեղծվում, որ հեղինակը ունի տարբեր լեզվամտածողություն:

2. Առաջին երեք գլուխներում ներկայացված տեսական վերլուծության բաժինը ներկայացված է մի փոքր ավելի մեծ ծավալով: Միաժամանակ որոշակի տեսական հիմնավորումներ ենք տեսնում նաև մեթոդաբանության և էմպիրիկ հետազոտությունների գլուխներում: Սա բացատրություններ է պահանջում գրական այսքան մեծ թվով աղբյուրներ (226) դիտարկելու տեսանկյունից:

3. Աշխատանքի 5.3 գլխում համեմատական վերլուծության համար ընտրված մոտեցմամբ նշվում է, որ «կիրառվել է հարաբերական վերլուծության սկզբունքը, որը սկսվում է որպես կոնցեպտուալ վերլուծություն...համարվում են իրենց իմաստը չունեցող, այլ իմաստը հասկացությունների միջև հարաբերությունների արդյունքն է» / էջ 150/: Այս և հաջորդ պարբերություններում խտացված են կարևոր մտքեր, որոնք լրացուցիչ մեկնաբանության կարիք ունեն և միևնույն ժամանակ շարահյուսական խնդիրներ:

4. Աշխատանքի 5.3.2 գլխում հոգեբանական ծառայությունների համեմատական վերլուծության է ենթարվել ավելի քան 100 եռալեզու ձևաթուղթ, որոնց առնչությունը սույն ատենախոսության հետազոտական խնդիրների հետ մինաշնակ պարզել հնարավոր չէր անգամ

Սակայն վերը նշված դիտողությունները և նշված վրիպումները ոչ մի կերպ չեն արժեզրկում ատենախոսության տեսական և կիրառական նշանակությունն ու բովանդակությունը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Իրինա Հովհաննեսի Բաբաջանյանի «Հոգեբանի հետազոտական և գործնական դիագնոստիկայում տեսական մոտեցումների և սկզբունքների կիրառման յուրահատկությունները» թեմայով «Ընդհանուր հոգեբանություն, հոգեբանության տեսություն և պատմություն, անձի հոգեբանություն» ԺԹ.00.01 մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման առաջադրված ատենախոսությունը իրենից ներկայացնում է հիմնարար տեսական, գիտագործնական հետազոտություն և համապատասխանում է ՀՀ գիտական աստիճանավորման կանոնակարգի 7-րդ կետի պահանջներին, իսկ ինքը՝ հեղինակը՝ Իրինա Հովհաննեսի Բաբաջանյանի արժանի է հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

Կարծիքը քննարկվել և հաստատվել է Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի բժշկական հոգեբանության ամբիոնի
թիվ. 19/ «01» հոկտեմբերի 2024թ. նիստում:

Ամբիոնի վարիչ
_____

Հ.գ.թ., դոցենտ Խաչատուր Գասպարյանի ստորագրությունը հաստատում եմ՝ Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի

Գիտական քարտուղար _____բ.գ..դ., պրոֆեսոր Տ. Գ. Ավագյան

«04» հոկտեմբերի, 2024 թ.